

ՅԵՂԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՒՆԵՐԸ ՔԻՒՐԴ ԽԱԹՈՒՆՆ ՈՒ ՀԱՅ ՏԻԿՒՆԸ

(Յեղային պատերազմներու պատճառները. կնոջ դերը փւրդ կեանքին մէջ. Յեղի ազնուացման խնդիրը. Հայ հարստահարութեան ներքին մեկ կողմը. ճորտութեան իրաւունքը.)

Թուենք նախ ցեղապետական կռիւներու հիմնական պատճառները .

1. Պետական կազմի ու ցեղապետական իշխանութեան գաղափարը .

Կ'ըսեն, ամեն մարդ հողէն իր աշխատութեան չափով օգտուելու իրաւունք ունի, աշիրի անհատ մը ուրիշ աշիրներու դէմ միշտ կը պաշտպանուի, բայց գերի հպատակ է իր ցեղի պէսին. այսպէս կը կառավարուին ներկայիս Տէրսիմ, Գուզուճան և ուրիշ տեղերը։ Աշիրները բաժնած են բնակած տեղերէն, երբ կռիւով կ'ընդարձակուի իրենց սահմանը՝ երբ յաղթեն, երբեմն կը պակսի երբ յաղթուին։ Աշիրի անդամները կ'որ գործիքներ են իրենց աշիրաթապետ Ալու-պէկին»։

Նոյնն է և Սասունինը. ու Մոկսի բէգութեանցը, Առաջինի մոսին (քաղուած 22 յուլիս 1911, «Ազատամարտի» ուղղուած թղթակցութենէն)։

«Հաղզոյի շրջակայ աշիրէթուիւնը դարերէ ի վեր կը կառավարուի հետեւեալ կանոններով. —

1. Աշիրէթ մը կազմուած կ'ըլլայ շատ մը մօտակայ ցեղերու միաւորութեամբ և կը կառավարուի ժառանգական աշիրէթապետին լիազօր իշխանութիւնով։

2. Իւրաքանչիւր ցեղ կ'ունենայ իր ցեղապետը, որ կը ղեկավարէ զինքը ներկայացնող համայնքը և կը ճանչնայ իր աշիրէթապետին վերին հսկողութիւնը։

3. Տարբեր աշիրէթներու պատկանող ցեղերու կամ անհատներու միջև ծագած վէճեր ու սպանութիւններ այն ատեն միայն աշիրէթական հանգամանք կ'առնեն, երբ ուէ կողմէ պաշտպանութիւններ երևին։

4. Սպանութեան մը հաշիւը կը փակուի առնուազն 50 Օսմ. ոսկի արեան գին տալով, կամ փոխադարձ սպանութիւնով։

5. Նիւթական ու բարդական վնասի պարագաներուն, հաւատարմապէս յարգելի է միւսխական «ակն ընդ ական և ատոմն ընդ ատոման» օրէնքը»։